


Чиновник

Запись о продаже

Ф. Чиновник



1913р

-5 OCT 2011

ՃՐԱ-1569

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Ֆ. Ժ Ա Բ հ

I

ԾՆՆԴԱՎԱՅՐ ԲԱԿԱԻԱՐ ԿՈՎԿԱՍ

(ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԸ)

II


ԲԱԿԱԻԱՐ

(ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԸ)

III

ԿՈՎԿԱՍ

(ԹԻՖԼԻՍ ՆԱզԱԽԸ)




ԽԱԶՄԵՑԻՆ

Մի խնկութե սիստեմի շնորհ

ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԵՍ“ Գրաֆիկայա փ. № 6

1913



ԵՐԵՎԱՆ 85

Հարմ.

3-ԿԿ71 ՁԱՆ-1569
3-ԿԿ71 ՁԱՆ-1569
(075)

-21

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Զ. Տ Հ Պ Ի

I
ԾԱՍԴԱՎԱՅՐ

(ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԸ)

II
ԲՆԱԳԱԻԱՌ

(ԹԻՖԼԻՍԻ ԶԱՀԱՐԸ)

(ԹԻՖԼԻՍԻ ՅԱՀԱՆՊԸ)

III

ԿՈՎԿԱՍ

ԿԱԶՄԵՑԻՆ

ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՑԻՑԻ ՀԵՐ

ՀԻՎ. № 20637



Թ. Ի. Ժ. Լ. Ի. Ս

Տպարան «ՀԵՐՄԵՍ», Գրաֆուլայա փող.

1913

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Կազմած է ըստ «Հայոց եկեղեցական դպրոցների ու
սումնական ձրագրի»:

Զեռքի տակ ենք ունեցել՝ Լեսգաֆտի, Կրուբերի, Իվանովի
Խրամելովի, Զաբարի, Թաւարբէգեանի աշխատասիրութիւններ
և այլ ձեռագիր նիւթեր:



ՀՕՏՏ-674

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Գ

1. ՄԵՐ ՏՈՒՆԸ

Այն բնակարանը, որտեղ ապրում ենք մենք մեր
ծնողների հետ՝ մեր տունն է:

Մեր տան բոլոր անդամները միասին կազմում են
մեր ընտանիքը։ Ընտանիքին ուրիշ խօսքով ասում են
նաև օջախ։ Ընտանիքի մեծը տան աւագ անդամն է։
Ընտանիքի աւագ անդամները սովորաբար լինում են
պապն ու տատը։

Տունը պահում են մեր ծնողները. մեր հայրը աշխա-
տում է գուրսը, իսկ մայրը՝ տանը։ Սա է կատարում տան
գործերը. — եփում է, կարում է, խնամում է ու հսկում
մեզ վրա։

Մեր ծնողները մեզ խնամելուց զատ, այլև հոգում
են մեր ուսման և կրթութեան վրա։

2. ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Մեր հայրենիքը այս երկիրն է, որտեղ ծնւել ու ապրել են մեր պապերն ու նախահայրերը, որտեղ գտնւում են նրանց հին-հին յիշատակները:

Մէկը կարող է ծնւել իր պապական հայրենիքից դուրս, մի օտար տեղ, բայց նրա հայրենիքը կըվնի դարձեալ իր պապերի երկիրը:

Մարդու ծնւած տեղը՝ նրա ծննդավայրն է, իսկ նրա պապական երկիրը՝ հայրենիքն է:

Այն գիտութիւնը, որ ծանօթացնում է մեզ մեր հայրենիքի հետ, կոչւում է Հայրենագիտութիւն:

Հայրենագիտութիւնը մեզ տալիս է հետեւեալ տեղեկութիւնները թէ ուստեղ է գտնւում մեր հայրենիքը, ի՞նչ պիսի մակերեսոյթ ունի նա, ի՞նչպիսի կլիմա, ի՞նչ բոյսեր ու կենդանիներ, և վեր են ապրում այնտեղ և այն:



I. ԾՆՆԴԱՎԱՅՐ

Բ. ԹԻՖԼԻՍ

Թիֆլիսը այժմ մի մեծ քաղաք է: Այդ քաղաքը հիմնել է վրացիների Վախթանգ Գորգ-Ասլան թագաւորը հինգերորդ դարում: Քաղաքում եղած հանքային տաք ջրերի պատճառով՝ անունը դրել է Թթվիլիս: Վախտանգի որդին էլ այդ քաղաքը դարձրել է իր թագաւորանիստ քաղաքը—մայրաքաղաքը:

1801 թւին վրացիների վերջին թագաւոր Գէորգ ԽԱ-ը Վրաստանը յանձնել է Ռուսաց Կայսր Աղէքսանդր Ա-ին, որովհետև չի կարողացել իր երկիրը պաշտպանել թշնամիների անվերջ յարձակումներից: Այն օրւանից մինչև այսօր Թիֆլիսը գտնւում է Ռուսաց իշխանութեան տակ:



Հին Թիֆլիսը

(Նկար 1850 թ.)

1. Հին Թիֆլիսը

Հին Թիֆլիսը եղել է պարսպով շրջապատւած մի փոքր քաղաք: Նրա հնութիւններից մինչև այսօր մնացել են՝ ա. Մետեխի ամրոցը, որ հիմա բանտի տեղ է ծառայում, որտեղ թաղւած է Վարդան Մամիկոնեանի աղջիկ ա. Շուշանիկը: Նրա գերեզմանի վրայ եկեղեցի է շինւածք. Հայոց վանքի աւագ եկեղեցին. գ. Վրացիների Սիօնի տաճարը. դ. Անչիսխատի եկեղեցին. ե. ս. Դաւթի մատուռը և զ. քաղաքի պարսպի ու Սօլօլակի սարի բերդի մնացորդները:

Հին Թիֆլիսն այնքան փոքր է եղել, որ ունեցել է Մետեխի, Սէյդաբաթի և Սօլօլակի թաղերը միայն: Մետեխի ամրոցն իր շրջակայքով եղել է հին Թիֆլիսի ամենաշքեղ մասը: Այդ ամրոցումն է գտնվել վրաց թագաւորների պալատը:



Նոր Թիֆլիսը


(Փոխարքայի պալատը)

2. Նոր Թիֆլիսը

1801 թւին Թիֆլիսն անցնելով Ռուսաց ձեռքը, ըսկառում է հետզհետէ մեծանալ և գեղեցկանալ բազմաթիւ շնչքերով. Թատրոններով, կամուրջներով, հիւանդանոցներով, զօրանոցներով, արձաններով և ուրիշ հիմնարկութիւններով:

Այժմեան քաղաքն ունի մօտ 9 վերստ երկարութիւն, 3 վերստի չափ լայնութիւն և 35 վերստ շրջապատ. տարեցտարի էլ աւելի ու աւելի մեծանում է: Այժմ քաղաքում կան 1242 փողոց, 23 հրապարակ և 12 զբուավայր, պարտէզ: Թիֆլիսն այժմ կովկասի վարչական, ուսումնական և առևտրական կենտրոնն է: Թիֆլիսումն է նստում երկրի կառավարչապետը, որ կոչում է Փոխարքայ:

Գ. ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԽՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Սղոլակի սարի բերդի մնացորդները

1. ԹԻՖԼԻՍԻ ՄԱԿԵՐԵՀՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ա. Դաւթի սարի գագաթից նայելիս՝ տեսնում ենք, որ Թիֆլիսը շինուած է մի փոսի մէջ։ Նրան ըրջապատում են լեռներ ու բլուրներ։ Քաղաքի մակերևոյթը՝ գետնի երեսը, միատեսակ չէ. կան ցածր և բարձր տեղեր։

Քաղաքի միջով հոսում է կուր գետը և քաղաքը բաժանում երկու մասի։ Դետի ափերը որոշ տարածութեան վրա հարթ են։ Զախ ափից հետզհետէ բարձրանում են Մախաթ և Շիլավլաւ սարերի գառիվայրերը. աշ ափից՝ Ս. Դաւթի (Մամա-Դաւթիթ, Մթածմինդա), Սօլուակի և Շինդիսեան սարերի գառիվայրերը։

Այսպիսով տեսնում ենք, որ քաղաքն ունի երկու թերութիւն և երեք փոքրիկ բարձրաւանդակներ։ Բարձրաւանդակներն են՝ Արսենալի, Հաւլաբարի և Մետեխի։

Թեքութիւնների և բարձրաւանդակների վրա այժմ կան հետեւեալ թաղերը. Կուր գետի աջ ափին՝ Վերայի, Մթածմինդայի, Տափի, Սօլուակի, Կոլոլ, Խարփուխի, Մէյդաբաթի և Օրթածալայի թաղերը. Զախ ափին՝ Դիղուրէի, Նախալովկայի, Կուկիայի, Չուղուրէթի, Սաղի, Հաւլաբարի, Շան և Նաւթլուղի թաղերը. Կազմուում են և նոր թաղեր՝ Վակէի ու Սարուրթալօի։



Կուր գետը

2. ԶՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Թիֆլիսը, բացի կուր գետից, ուրիշ ջրեր չունի. կան մի քանի աննշան աղբիւրներ և առւակներ, որոնք թափւում են կուրի մէջ։ Կուր գետը հոսում է քաղաքի երկարութեամբ մօտ 9 վերստ։ Նա այնքան ցածր է, որ հսարաւորութիւն չէ տալիս ըրջակայքը ոռոգելու. Նոյն-իսկ քաղաքի ամենացած մասում՝ Օրթած-

լայում, այգիները ջրելու համար կուր գետից ճախարակած մեքենաներով ջուր են բարձրացնում:

Կուր գետի ջուրը այժմ խմելու համար անպէտք է համարում, որովհետև քաղաքի կեղտոտութիւնները կայուղիներով թափառում են նրա մէջ: Քաղաքը իր խմելու ջուրը ստանում է Աւչալայի ջրանցքից. այդ ջուրը բազմաթիւ խողովակներով ցրւում է ամրող քաղաքում:

3. Կ Լ Ի Մ Ա Ն

Ինչպէս տեսանք, Թիֆլիսը գտնուում է մի փոսի մէջ, որ շրջապատւած է երեք կողմից սարերով: Ամառը Թիֆլիսում սաստիկ շոգ է լինում, պատճառն այն է, որ շրջապատող մերկ սարերը տաքանում են ու տաքացնում են քաղաքի օդը, այնպէս որ քամի չըխաղալով՝ քաղաքի օդը մնում է անշարժ:

Գարնանն ու աշնանը օդը դուրեկան է լինում, իսկ ձմեռը՝ մեղմ: Ձմեռը քիչ է ձիւն գալիս, եկածն էլ շուտով հալւում է:

Թիֆլիսի կլիման առհասարակ բարեխառն է: Ամառայ շոգից ազատւելու համար, քաղաքի բնակիչների մեծ մասը գնում է ամարանոց՝ կոջոր, Մանգլիս, Բէլի-Կիւչ, Ծղնէթ, Ղարաքիլիսա, Դիլիջան, Բորժոմ, Աբասթուման, Սուրամ, Ուրավել, Բակուրիանի և կովկասի հանքային ջրերը՝ Պետիգորսկ, Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ, Եսսենտուկի և այլն:

4. ԳԵՏՆԻ ՑԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի գետնի հողը միատեսակ չէ, գանազան տեղերում նա զանազան յատկութիւն ունի:

Ա. Քաղաքը շրջապատող սարերի ստորոտները՝ գետափից սկսած՝ մեծ մասամբ քարքարոտ են ու աւազու-

Բ. Քաղաքի վերին մասերը՝ Կուկիայի և Դիդուքէի թաղերի հողը՝ բուսականութեան յարմար աւազախառն սկահող է:

Գ. Վերա և Հաւլաբար թաղերի գետինը կաւահող է, որից պատրաստում են աղիւս և կաւէ զանազան ամաններ:

Դ. Շան-թաղի շրջակայթում գետինը կրահող է, որից գաջ են պատրաստում շինութիւնների համար:

Ե. Օրթաճալայի գետինը խոնաւ աւազախառն սկահող է, ուր և աճում է քաղաքի բուսականութեան մեծ մասը:

Զ. Խարփուխի, Սէյդաբաթի, Յօլօլակի և Մթածմինդայի թաղերի գետինը կազմւած է մեծ մասամբ ապառաժ կապոյտ քարից, որ գործ են ածում շէնքերի համար: Սէյդաբաթի մօտերբում՝ Թաբորիս-Մթա բլուրի ստորոտում՝ գետնից բղխում են հանքային տաք ջրեր, որոնց վրայ շինւած են մի շարք բաղանիքներ:

5. ԲՈՒՀԱԾԿԱՆՑՈՒԹԻՒՆԸ

Հողի և ջրի անյաջող պայմանների պատճառով քաղաքի բուսականութիւնը համարեա աղքատ է. եղածն էլ պահուում է արհեստական միջոցներով:

Քաղաքի բուսականութիւնը կազմում են:

Ա. Վերայի և Մուշտայիդի այգիները. Բ. Քաղաքի կենդրուում Աղէքսանդրեան, Փոխարքայի և Պուշկինեան պարտէգները. Գ. Յօլօլակի սարի ետև Բուսարանական այգին. Դ. Շինդիսեան սարի ստորոտներում Կրծանիսի այգիները. Ե. Օրթաճալայում՝ Օրթաճալայի այգիներն ու բանջարանոցները:

Բացի սրանցից քաղաքի գանազան վայրերում կան ծաղկանոցներ, պարտէզներ և ծառեր. Մախաթի սարի

լանջերին անկած է քաղաքային Խուղագեան արհեստական անտառը:

Քաղաքի այգիները տալիս են թարմ ու ազնիւ տեսակի մրգեղէն՝ նուշ, սալոր, կեռաս, ծիրան, դամբուլ տանձ, խնձոր, դեղձ, խաղող, ունաբ, սերկելի և այլն: Բանջարանոցներից ստացում է՝ բողկ, տակ, վարունկ, լոբի, սոխ և այլն:

6. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Թիֆլիսի բնակչութիւնը առհասարակ չի զբաղւում ոչ անասնապահութիւնով և ոչ էլ խաշնարածութիւնով: Կան մի քանի թաղեր միայն, որոնց բնակիչների մի մասը պահում է ընտանի կենդանիներ.—կով, եղ, . ձի, գոմէ՛ և այլն:

Նաւթլուղի, Շան-թաղի, Սաղի, Օրթաճալայի, Դիդուքէի, Նախալովկայի ու Վերայի բնակիչների մի մասը կովեր է պահում: Գարունքից աշուն նրանց նախիրը արածում է քաղաքի շրջակայ արօտներում, իսկ ձմեռը այդ անասուններին պահում են առնովի խոտ ու դարմանով:

Բնակիչների մի մասն էլ, որ պարապում է կառապանութեամբ ու սայլապանութեամբ, պահում է ձիեր, եղներ, գոմէջներ և այլն: Առհասարակ անասուններ պահում են քաղաքի ծայր թաղամասերում:

Քաղաքին մսացու կենդանիներ տալիս են նրա շրջակայրի գիւղ ու քաղաքները: Այդ կենդանիները մորթւում են քաղաքային սպանդանոցներում, որ գտնուում են նաւթլուղ քաղաքամասում:

7. ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐ

Մարդիկ ապրում են երկրի վրայ թէ ցուրտ և թէ տաք տեղերում: Նրանց ապրելու տեղը կոչւում է բնակավայր կամ բնակատեղի:

Բնակավայրը լինում է զիւղ կամ շէն, աւան կամ գիւղաքաղաք և քաղաք:

Քիչ բնակչութիւն ունեցող տեղը կոչւում է զիւղ կամ շէն: Գիւղից մեծ բնակավայրը կոչւում է աւան կամ գիւղաքաղաք: Գիւղաքաղաքից մեծը կոչւում է քաղաք:

Մի քանի գիւղեր միասին կազմում են գիւղական հասարակութիւն: Մի քանի գիւղական հասարակութիւն միասին կազմում են վիճակ: Մի քանի վիճակ միասին կազմում են մի գաւառ: Գաւառն ունենում է մի քաղաք, որ կոչւում է գաւառական քաղաք: Մի քանի գաւառ միասին կազմում են մի նահանգ: Նահանգի մեծ քաղաքը կոչւում է նահանգական քաղաք: Մի քանի նահանգներ միասին կազմում են մի երկիր: Մի կամ մի քանի երկիրներ միասին կազմում են մի սետութիւն կամ տէրութիւն:

8. ԹԻՖԼԻՍԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Թիֆլիս նահանգական քաղաք է: Նա ունի 325,000 բնակիչ, սրանից մոտ 120,000-ը հայեր են, մեծ մասը հայութաւորչական. 50,000-ից աւելին վրացիներ, 64,000-ի չափ ուուներ, թէ վրացիները և թէ ուուները կրօնով յունադաւան են: Քաղաքի մասցած բնակիչները զանազան ազգեր են.—թուրք, պարսիկ, լեզգի, մահմեդականներ, հրէաներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ և այլն:

Քաղաքի ամենաբազմամարդ թաղն է Հաւլաբարը, որ ունի մոտ 50,000 բնակիչ, որոնցից մեծ մասը հայեր են:

Քաղաքամասեր.

Քաղաքը բաժանւած է 12 քաղաքամասի: Խւրաքան չիւր մասի կարգապահութեան ընդհանուր վերահսկիչ կոչւում է պղիստալ: Նա ունի մի օգնական, մի քանի թաղապետներ և բազմաթիւ քաղաքապահ ոստիկաններ Բոլոր պղիստաները ենթարկում են ոստիկանապետի շխանութեանը: Ոստիկանապետը ենթարկում է նահանգապետին, նահանգապետն էլ երկրի կառավարչապետին Փոխարքային:

Քաղաքային խորհուրդ կամ դումա.

Քաղաքի գործերը կառավարելու համար բնակիչների իրենց միջից ընտրում են ծայնաւորներ: Զայնաւորների խորհուրդը կոչւում է քաղաքային խորհուրդ կամ դումա Քաղաքային դուման իր միջից ընտրում է մի քաղաքազոլի և մի քանի օգնականներ: Քաղաքազիթի և իր օգնականների խորհուրդն էլ կոչւում է քաղաքային վարչովմին:

9. ՊԱՐԱՊՄՈՒԻՆՔՆԵՐ ԵՒ ԱՐՀԵՍՏՆԵՐ

Թիֆլիսի բնակիչների մի մասը պարապում է վաճառականութիւնով: Խբրկ մեծ քաղաք՝ Թիֆլիսը առևտրական կապեր ունի իր շուրջն եղած բոլոր բնակավայրերի հետ Քաղաքում կան թէ խոշոր առևտրական տներ և թէ բազմաթիւ մանր վաճառականներ:

Բացի առևտուրից, բնակչութեան մի խոշոր մասը տղամարդ թէ կին, պարապում է զանազան արհեստներով որոնց համար կան կաշլի, թաղիփի, ծխախոտի, ձէթի սապնի, խմիչքների, տախտակի, կոնֆէտի և այլ բազմաթիւ գործարաններ ու արհեստանոցներ:

Բնակիչների մի մասն էլ ծառայում է երկաթուղուայրանում և երկաթուղու վրայ, տրամւայի վրայ, պոստ-

հեռագրատներում, դատարաններում, վարչական այլ այլ հիմնարկութիւնների մէջ, դպրոցներում, հիւանդանոցներում, հոգևոր և մարմնաւոր հաստատութիւններում, բանկերում, զօրանոցներում և այլն:



Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրոցը

10. ԹԻՖԼԻՍԻ ՆՇԱՆԱԿՈՒՐ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քաղաքի կենտրոնում գտնւում է Կովկասի Փոխարքայի պալատը. Նրան կից շինւած է Ռուսաց զինւորական տաճարը: Թիֆլիսն ունի նաև հետեւեալ հիմնարկութիւնները.

Դպրոցներ.—Կանանց բարձրագոյն կուրսեր, Ուսուցչական ինստիտուտ. Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրոց, Վրաց հոգևոր սեմինարիա, տղայոց 6 և օրիորդաց 5 գիմնազիօն, Բէլական դպրոց, Հայոց Յովլանեան և Գայիանեան օրիորդաց միջնակարգ դպրոցներ: Տեխնիքական, ինժենե-

բական, առևտրական, այգեգործական, արհեստաւորաց, իւնկերական, կադեաների, ֆելդշերական, երաժշտական, նկարչական, ձեռագործի, կոյրերի և այլ գպրոցներ:

Բացի յլշեալ

գպրոցներից՝ քաղաքն էլ իր հաշուով պահում է մի շարք քաղաքային դպրոցներ: Հայոց եկեղեղեցիներն էլ իրենց դպրոցներն ունեն, որ ծխական դըպրոցներ են կոչւում:

Թարոններ.


Արքունական, Արտիստական, Վրաց ազնւականների և մի ժողովրդական տուն Զուբալովի անունով:

Գրադարաններ, ընթերցարաններ, թանգարաններ և ուրիշ կրթական հիմնարկութիւններ:

Արձաններ.—Վարանցովի, Պուշկինի, Գոդովի, Գրիբաւեդովի: Հայոց վանքի բակում գտնւում են հայոց նշանաւոր գործիչների և զօրավարների արձանները:

Կամուրջներ.—Բաղաքի երկու մասը միմեանց հետ միացած են եօթ կամուրջներով:

Հայերն ունեն առաջնորդարան, որտեղ նստում է բազային լուսով:



Վարանցովի արձան

Թիֆլիսի թեմի Առաջնորդը: Նրա իշխանութեան տակ է գտնվում Հայոց վիճակային կոնսիստորիան: Ունեն նաև բազմաթիւ ընկերութիւններ, ինչպէս օրինակ՝ Բարեգործական, Հրատարակչական, Հայ գրողների, Ուսուցչական Միութիւն, Կանանց Բարեգործական Ընկերութիւն և այլն:



Վանի աւագ եկեղեցին

Բաղաքում կան շատ եկեղեցիներ, աղօթատներ և մզկիթներ: Հայերն ունին 24 եկեղեցի: Մայր եկեղեցին է Վանքի աւագ եկեղեցին:


Հիւանդանոցներ.—Միքայէլեան, Արամեան, Զինուրական: Ծերերի և երեխաների ապաստարան, Ծննդաբերական աներ և այլն:

Թիֆլիսում հրատարակւում են օտար, և հայկական օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսագրեր և այլ գրքեր:

Բաղաքի փողոցները լուսաւորւում են էլեկտրական և լազային լուսով:



տարւում է նաև կառքերով ու էլեքտրաքարշով։ Ս. Դաւթի սարը կարելի է բարձրանալ Փունիկովերով։ Ֆունիկուլերը գործում է էլեքտրական ուժով։



Ս. Դաւթի սարը եւ ժամփիպալերը

11. ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Թիֆլիսի, իբրև կենդրոնական քաղաք, զանազան տեսակ ճանապարհներով հաղորդակցութիւն ունի թէ իւշը շրջակայքը և թէ դրսի երկիրների հետ։

Նա երկաթուղով միացած է Բագրի, Բաթումի Ղարսի, Երևանի, Զուլֆայի, Բորժոմի, Սուրամի, Փոթի և Քութայիսի հետ։ Թիֆլիսից Բալաջարի վրայով մի գիշել անցնում է դէպի Ռուսաստան։ Ունի և բազմաթիվ խճուղիներ, որոնցով կարելի է գնալ Թելաւ, Սղնախ Մանգլիս, Բելի-Կիլիչ և այլն։ Կայ և մի մեծ խճուղի, ու անցնում է Կովկասեան լեռնաշղթան և համում է մինչ Վլադիկավագ, դա կոչւում է Ռազմավիրական խճուղի։

Դ. ԵՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

1. ԵՐԿԻՆՔ

Երկինքն է այն անվերջ տարածութիւնը, որտեղ գտնառում են արեգակը, լուսինը և անթիւ ու անհամար աստղեր։ Երկրի վրայ ամեն տեղ երկինքը կամարաձև երևում է մեր գլխի վերևում։ այդ պատճառով երկնքին ասում են նաև երկնակամար։ Երկինքը բաց կապոյտ գոյն ունի։

2. ԱՐԵՒ ԵՒ ՆՐԱ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Արեւ մի հրեղէն լուսատու գունդ է։ Նա մեզանից շատ ու շատ հեռու է։ Եթէ կարողանանք ժամը 60 վերստ գնալ, 300 տարում կը հասնենք նրան։

Արեւ մեր երկրից $1\frac{1}{2}$ միլիոն անգամ մեծ է, բայց փոքր է երևում, որովհետեւ շատ հեռու է մեզանից։

Արեւ մեզ տալիս է լոյս և տաքութիւն։ Առանց արևի երկրի վրայ ապրել չէր կարելի, կը մեռնէին բոյսերը, կենդանիներն ու մարդիկ։

Արեւ ծագում է առաւօտը, կէս օրին գտնառում է մեր գլխի վերևում, երեկոյեան մայր է մտնում։ Արեւի այս շարժումը կոչւում է տեսանելի շարժում։

3. ԼՈՒԾԻՆ ԵՒ ՆՐԱ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Լուսինը մի գնդաձև երկնային մարմին է: Նա սեփական լոյս չունի. իր լոյսը ստանում արեգակից և գիշերը լուսաւորում է երկերը: Լուսինը մեզնից այնքան էլ հեռու չէ: Եթէ կարողանանք մի ժամում գնալ 50 վերստ՝ մի տարում կը հասնենք լուսնին: Նա մեր երկրից 50 անգամ փոքր է:



Լուսին լուսնի

Լուսինը զանազան ժամանակներում զանազան ձև է ընդունում: Դեռ նրա առաջին մասն է երկում մանդաղաձև, այդ ձևը կոչվում է լուսնի առաջին քառորդ: Որոշ ժամանակից յետոյ նա երկում է ամբողջովին՝ շրջանաձև, այդ ձևն էլ կոչվում է լրումն լուսնի: Մի որոշ ժամանակից յետոյ էլ երկում է նրա վերջին մասը՝ դարձեալ մանդաղաձև, դա էլ կոչվում է վերջին քառորդ:

Վերջին քառորդից յետոյ մի քանի օր լուսինն անհետա, նույն է, այդ ժամանակամիջոցն էլ կոչվում է ծնունդ լուսնի:

Լուսնի այս ձևափոխութիւններին ասում են լուսնի փոփոխութիւն: Լուսինն էլ արեկի նման դուրս է դալիս,

անցնում է երկնակամարով և մայր է մտնում հակառակ կողմում: Այդ շարժումն էլ կոչվում է լուսնի տեսանելի շարժում:

4. ԱՍՏՂԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Բացի արեգակից և լուսնից երկնքում երկում են բազմաթիւ գնդաձև փայլուն մարմիններ, որոնք կոչվում են աստղեր: Նրանցից շատերը արեկից էլ մեծ են, բայց որովհետև չափազանց հեռու են գտնվում, մանր են երեսում մեզ:

Երկնքում միշտ աստղեր կան, բայց ցերեկը չեն երկում, որովհետև արեկի լոյսը խանգարում է: Աստղերը, փոփոխում են իրենց տեղերը բայց և իրարից չեն հեռանում: Այդ շարժումը կոչվում է աստղերի տեսանելի շարժում:

5. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ ԵՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Երկերը շրջապատւած է օդով: Օդի այդ ամբողջ շերտը կոչվում է մթնոլորտ: Նա ունի մօտ 300 վերստ հաստութիւն: Առանց օդի չեն կարող ապրել ոչ մարդիկ, ոչ կենդանիներ և ոչ էլ բոյսեր:

Մառախուղ.—Արեկի տաքութիւնից ջուրը գոլորշիանում է և տարածւում օդի մէջ: Տաք եղանակին մենք չենք տեսնում այդ գոլորշին: Երբ արեկը մայր է մտնում, գետինը և օդը սառչում են, այդ գոլորշիները սղմւում են և դառնում են մառախուղ, որ մենք աչքով տեսնում ենք: Մառախուղը ծխի նման ծածկում է գետինը:

Ամպ.—Նոյն ձեռվ էլ, երբ երկրի ջրերի գոլորշիները բարձրանում, համանում են օդի աւելի ցուրտ շերտերին, նրանք այնտեղ սառչում, խտանում են և դառնում ամպեր:

Յօդ.—Ամառը, երբ տաք օրին հետևում է ցուրտ գիշեր, գետինը սառչում է և ջրի գոլորշիները օդի ցածր շերտերից կաթիլների նման նստում են գետնին ու նրա վրայ եղած առարկաներին։ Օդից իջած այդ կաթիլները կոչւում են ցոլ։

Անձրեւ.—Զրի այդպիսի կաթիլներ, եթէ թափւում են օդի վերին շերտերից, ամպերից, կոչւում են անձրեւ։

Եղեամ.—Երբ օդի ստորին շերտերի գոլորշիները սաստիկ ցրտից սառչում են, թափւում ու բարակ քողով ծածկում գետինը, դրան ասում են եղեամ։

Ջիւն.—Իսկ երբ սառած գոլորշին ամպերից է թափւում, դրան էլ ասում են ծին։

Կարկուտ.—Ամառը, երբ օդի վերին շերտերը յանակարծ սաստիկ ցրտում են, անձրեի կաթիլները սառչում են ու դառնում կարկուտ։ Յօդը, անձրեը, եղեամը, ձիւնը և կարկուտը տեղում են մթնոլորտից և կոչւում են մթնոլորտային տեղումներ։

Կայծակ.—Ամառը անձրեի կամ կարկուտի ժամանակ ամպերը յաճախ որոտում են։ Որոտի ժամանակ փայլատակում է մի կրակ, որ կոչւում է կայծակ։ Կայծակը էլքրտրական մի կայծ է, որ ընկնում է կամ մի ամպից միւրամպի վրայ և կամ գետնին։

Որոտը լսում է փայլակի երեալուց յետոյ, որովհետեւ լոյսը ձայնից շուտ է հասնում մեզ։

ՀԵԿ

Ե. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ Ե Ր Ջ Ծ Ե Ն Ո Թ Ո Ւ Թ Ի Ւ Խ

1. ՀՈՐԻԶՈՆ, ԿԱՄ ԱՉՔԻ ՏԵՍՈՂՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆ.

Երբ մենք կանգնում ենք բաց դաշտում և դիտում ենք մեր չորս կողմը, մեզ այնպէս է երևում, թէ երկինքը մի շրջանաձև գծով միանում է երկրի հետ։ Այդ շրջանաձև գիծը կոչւում է հորիզոն։


Մեզ թւում է, որ եթէ մեր կանգնած տեղից առաջ գնանք՝ կը հասնենք երկինքը երկրի հետ միացնող գծին—հորիզոնին։ Բայց որքան առաջ ենք գնում, չենք հասնում և բացւում են մեր առաջ նոր ու նոր հորիզոններ։

Սարի գագաթից դիտելիս՝ մեր աչքը տեսնում է աւելի հեռուն և հորիզոնի շրջագիծը աւելի՝ է մեծանում։ Զորից դիտելիս՝ հեռուն չենք տեսնում և հորիզոնը աւելի է փոքրանում։ Ու այսպէս միշտ՝ երբ փոփոխում ենք մեր տեղը, հորիզոնն էլ փոխում է։ Ուրեմն՝ հորիզոնը փոփոխական է։

Հորիզոնից դէնը մեր աչքը ոչինչ չի տեսնում։ Իէնց դրա համար էլ հորիզոնին ասում են նաև աչքի տեսողութեան սահման։

2. ՀՈՐԻԶՈՆԻ ԿԱՄ ԱՇԽԱՐՀԻ ԿՈՂՄԵՐԸ.

Հորիզոնն ունի չորս կողմ: Այն կողմը որտեղից արևն է ծագում, կոչում է արեւելք: Արևելքի հակառակ կողմը, ուր արևն է մայր մտնում, կոչում է արեւմհատք: Այն կողմը, որտեղ արևը լինում է կէս օրին՝ կոչում է հարաւ: Հարավի հակառակ կողմը կոչում է հիախ: Այս չորս կողմերը համարում են աշխարհի գլխաւոր կողմերը:




Արեւի ծագմամբ

Երբ յայտնի է մեզ հորիզոնի մի կողմը, նրա օգնութեամբ կարող ենք գտնել հորիզոնի միւս կողմերը: Եթէ երեսներս դարձնենք դէպի արևելք, մեր յետեկի կողմը կըլինի արևմուտք, աշ կողմը կըլինի հարաւ, իսկ ձախ կողմը հիւսիս:


Բացի յիշեալ չորս գլխաւոր կողմերից, հորիզոնն ունի և ուրիշ չորս կողմ: Հիւսիսի և արևելքի մէջտեղը գտնուած կողմը կոչում է հիախ-սրբելեան կողմ: Հարաւի և արևելքի մէջ տեղինը՝ հարաւ-արեւելեան կողմ: Հիւսիսի և արևմուտքի մէջ տեղինը՝ հիախ-արեւմտեան, իսկ հարաւի և արևմուտքի մէջ աեղինը՝ հարաւ-արեւմըտեան: Հորիզոնի այս չորս կողմերն եւ կոչում են երկրորդական կողմեր:

3. ԿՈՂՄՆԱՑՈՅՑ ԿԱՄ ԿՈՄՊԱՍ.



Աշխարհի կողմերը

ցոյց է տալիս երկրի կողմերը: Այդ գործիքը կոչում է կողմնացոյց կամ կոմպաս:



Կողմնացոյց

Սլաքի մագնիսացրած ծայրը սովորաբար ու կամ կաղոյտ են ներկում: Այդ ծայրը միշտ նայում է դէպի հիւ-

ինչպէս տեսանք, հորիզոնի կամ աշխարհի չորս կողմը գտնում են արևի միջոցով. բայց միշտ արևի վրայ յոյս գնել չի կարելի, որովհետեւ ամպամած օրերին արև չի լինում:

Գիտնականները հնարել են մի գործիքը, որ ամեն ժամանակ և ամեն տեղ

մի գործիք է: Նրա մէջ ցցւած է մի ասեղ: Այդ ասեղի ծայրին հապցրած է մի սլաք, որի ծայրերից մէկը մագնիսացրած է: Այդ սլաքը այնպէս է դըրւած, որ կարող է ազատ շարժւել ամեն կողմ:

սիս, իսկ հակառակ ծայրը, դէպի հարաւ։ Կողմնացոյց երեսի վրայ նշանակւած են տառեր, որոնք ցոյց են տա լիս երկրի գլխաւոր և երկրորդական կողմերը։ Որքան շրջենք սլաքը՝ վերջ ի վերջոյ նրա ներկած ծայրը նորի կընայի դէպի հիւսիս։ Սլաքի միջոցով գտնելով հիւսիսայի կողմը, գտնում են և միւս կողմերը։

4. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ցամաքի երեսը՝ մակերեւոյթը, ամեն տեղ միատեսաչ։ Մի տեղ հարթ է, մի տեղ դար ու փոս, մի տեղ նորածրանում է, մի ուրիշ տեղ՝ ցածրանում։

Հարթութիւն։—Ցամաքի հարթ ու հաւասար մակերեւոյթը կոչւում է հարթովթիւն կամ հարթավայր։

Սարահարթ։—Հարթութիւն կայ, որ ծովի մակերեւոյթից հարիւր սաժէնից աւելի բարձր է. այդպիսի հարթութիւնը կոչւում է սարահարթ, բարձր—հարթովթիւն կամ բարձրաւանդակ։

Սորգահարթ։—Հարթութիւն էլ կայ, որ ծովի մակերեւոյթից բարձր է մինչև հարիւր սաժէն, այդպիսի հարթութիւնն էլ կոչւում է ստորահարթ, ցածր հարթովթի կամ դաշտավայր։

Անապաս։—Անջուր ու անպտուղ աւազոտ հարթութիւնը կոչւում է անապատ։

Բլուր։—Կէս վերստից պակաս բարձրութիւնը կուում է թլուր։

Լեառ։—Կէս վերստից աւելի բարձրութիւնը կոչւում է լեառ կամ սար։ Սարի ներքեւ մասը կոչւում է ստորի կամ փեշ, միջին մասը՝ լանջ կամ կող, վերին մաս գագաթ կամ գլուխ։

Լեռնաշղթայ։— Սարերի շարքը կոչւում է լեռն

շղթայ։ Առանձին-առանձին կանգնած լեռները կոչւում են լեռնազագաթներ։ Միմեանց զուգահեռական լեռնաշղթաները կոչւում են զուգազմնաթագաներ, իսկ միմեանց կտրող լեռնաշղթաները կազմում են լեռնահանգոյցներ։ Լեռներով հարուստ երկիրը կոչւում է լեռնաշխարհ։ Հովիս։—Սարերի կամ լեռնաշղթաների ստորատներում եղած հարթութիւնը, ուր սովորաբար ջուր է հոսում, կոչւում է հովիտ։ Նեղ և խոր հովիտը կոչւում է ծողը։

Կիրճ։—Շատ նեղ ձորը կոչւում է կիրճ։

5. Գ Ե Տ.

Անձրկի և ձիւնի հալւած ջրերի մի մասը գոլորշիանում է, մի մասն էլ ծծւում է գետնի մէջ։

Ծծւած ջուրը երբեմն գետնի մէջ հանդիպելով որևէ արգելքի՝ դուրս է բղխում, այդ ջուրը կոչւում է աղքիլո։ Աղքիլուների ջրերը միանում են իրար հետ և կազմում են առւակներ, առւակները առուներ։ Առուները դառնում են թէ գետակներ և թէ գետերի վտակներ։ Վտակները միանալով կազմում են գետեր։

Ակունք։—Գետի սկիզբն առած տեղը կոչւում է ակունք։

Գետարերան։—Այն տեղը, որտեղ գետը թափւում է մի ուրիշ գետի կամ ջրի մէջ, կոչւում է գետարերան։

Տաօտ կամ չուն։—Այն ճամփան, որով հոսում է գետը, կոչւում է տաօտ կամ հուն։

Ափ։—Գետը ունի երկու ափ՝ աջ և ձախ։ Երբ երեսներս դարձնենք այն կողմը, ուր հոսում է գետը, մեր աջ կողմը կըլինի գետի աջ ափը, ձախ կողմը, ձախ ափը։

Վասակ.—Այն հոսող ջռւրը, որ թափւում է որևէ գիտի մէջ, կոչւում է վտակ:

Զրվէժ.—Բարձր տեղերից ներքեւ թափւող ջրերը կադարձում են ջրվէժ:

6. Լիճ եւ ԾՈՎ.

Երկրագնդի վրայ ջռւրը երեք անգամ շատ է ցամացից:

Լիճն.—Ջրով լցւած բնական մեծ փոսը կոչւում է լիճ լճերի մեծութիւնն ու խորութիւնը միշտ տարբեր են և նում: Գետերի ջրերը համարեա միշտ քաղցր են, իսկ Աճերի ջրերը մեծ մասամբ դառը և աղի:

Ջրերի ահագին տարածութիւնը կոչւում է ովկիանու Ովկիանոսը մաշելով ցամաքի ափերը տեղ-տեղ մտնում նրա մէջ և գոյացնում ծով, ծոց, նաւահանգիստ, խոր ջրանցք, նեղուց:

Ծով.—Ովկիանոսի այն մասը, որ մեծ չափով մտնու է ցամաքի մէջ, կոչւում է ծով: Ծովերի ջրերն էլ դասմեն նաղի են:

Ծոց.—Ովկիանոսի այն մասը, որ փոքր չափով մտնում ցամաքի մէջ, կոչւում է ծոց: Ծոցեր կազմում են, գարնանը և աշնանը՝ խոնաւ: Օդի տաքութեան և նաև ծովերն ու լճերը:

Նաւահանգիստ.—Այն փոքր ծոցը, որտեղ ալեկոծուական է, իսկ կլիման հասաւատուն:

Թիւն չի լինում և որտեղ կանգ են առնում նաւերը, կոչւում է նաւահանգիստ: Այդպիսի ծոցերի մօտ շինւած է, իսկ հարաւային երկիրներին՝ տաք: Այն տեղերում, ուր միացնում է նաև լիճները քիչ են գալիս՝ կլիման լինում է չոր: Այն տեղում է ջրանցք: Նեղ ջրանցքը կոչւում է նեղուց:

7. ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ.

Երկրագունդը շրջապատւած է օդով: Օդը թափանցիկ է, թեթև և գոյն չունի: Օդի շարժւելուց առաջանում է քամի:

Առեւ ճառագայթներն ազատ կերպով անցնում են օդի միջով և համարեա չեն տաքացնում նրան: Օդը իր տաքութիւնն ստանում է գլխաւորապէս երկրի մակերևոյթից, այդ պատճառով էլ օդի ներքին շերտերը տաք են, վերին շերտերը՝ ցուրտ: Եւ այսպիսով օդը լինում է ցուրտ և տաք: Օդի ցըտութիւնն ու տաքութիւնն իմանում ենք մի գործիքով, որ կոչւում է ջերմաչափ (տերմոմետր): Օդի ցըտութեան և տաքութեան չափը կոչւում է բարեխառնութիւն: Օդի ստորոտին շերտերն աւելի ծանր են՝ քան վերին շերտերը: Օդի ծանրութիւնը չափում են մի գործիքով, որ կոչւում է ծանրաչափ (բարոմետր):

8. Կ Լ Ի Մ Ա.

Օդի տաքութիւնը և ցըտութիւնը օրւայ և տարւայ սութիւնը կոչւում է եղանակ: Այդ փոփութիւնը կոչւում է եղանակ. գարուն, ամառ, աշուն, ձմեռ:

Ձմեռը եղանակը ցուրտ է լինում, ամառը՝ տաք և սութիւնը կոչւում է լինում, աշունը և աշնանը՝ խոնաւ: Օդի տաքութեան և սութեան չափը կոչւում է կլիմա: Եղանակը փոփութիւնը կոչւում է կլիմանը:

Ընդհանրապէս հիւսիսային երկրների կլիման ցուրտ է, իսկ հարաւային երկիրներին՝ տաք: Այն տեղերում, ուր միացնում է նաև լիճները քիչ են գալիս՝ կլիման լինում է չոր: Այն տե-

ղիմանը կոչւում է չոր: Այն տեղում է ջրանցքը: Այդ ծովայինը՝ խոնաւ:

2. ԹԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ, ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Զ. ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ, ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐ

1. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈՎՀՈՒԹԻՒՆ.

Ինչպէս ասացինք, մարդիկ ապրում են գիւղերում և բանքներում: Գիւղի բնակիչները պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ և հովտութեամբ:

Այն մարդիկ, որոնք մշակում են երկրի հողը, կոչ կոչում են երկրագործներ: Երկրագործների պարապմունքը կոչում է երկրագործութիւն: Այն մարդիկ, որոնք հովտում, խնամում են զանազան անասուններ, կոչում են հովիւներ, իսկ նրանց պարապմունքը կոչում է հովութիւն:

Երկրագործները ցանում են ցորեն, գարի, հաճար, կորեկ, սիմինդ, բրինձ, բամբակ, վուշ, կանէփ, կունջուդ և այլն: Ցանում են նոյնպէս բանջարեղին՝ կարտոֆիլ, լուքի, կաղամբ, սիսեռ, բողկ, սոխ, սխտոր և ուրիշ կանաչեղին:

Կան և մարդիկ, որոնք մշակում են զանազան այգիներ ու պարտէզներ և ստանում են խաղող, տանձ, խընձոր, դեղձ, սալոր, կեռաս և այլ մրգեր:

Հովիւները լինում են անասնապահներ և խաշնարածներ: Անասնապահները պահում են խոշոր կենդանիներ՝ կով, եղ, գոմէշ և ձի: Խաշնարածները պահում են ոչխար, այծ և այլն:

Հովիւները ստանում են իւղ, պանիր, միս, բուրդ, կաշի և արտահանում են ծախելու:

Կան մարդիկ, որոնք պահում են մեղու, շերամ և կամ զբաղում են գիւղական կեանքին անհրաժեշտ արհեստներով:

Կան ցեղեր, որոնք մշտական բնակավայր չունեն: Նրանք զբաղում են ձկնորսութեամբ և որսորդութեամբ, հաւաքում են նաև պտուղներ և արմատներ: Երբ մի տեղ պակասում է այդ բոլորը, նրանք տեղափոխում են մի ուրիշ տեղ, տանելով իրենց հետ իրենց անհրաժեշտ գործիքները: Այդպիսի ցեղերը կոչում են թափառական ցեղեր:

Կան ցեղեր, որոնք ունեն հօտեր, ուղարեր, ձիերի ջուրեր, եղջերուներ և այլն, նրանք իրենց անասուններին կեր, գանելու համար շարունակ չում են տեղից տեղ: Կոչ կեր գանելու համար շարունակ չում են տեղից տեղ: Այդպիսի ցեղերը կոչում են ջուրուներ:

Մարդկութեան մեծամասնութիւնը նստակեաց կեանք է վարում, ունի իր մշտական բնակարանը, ապրում է գիւղերում և քաղաքներում: Ջքաղում է երկրագործութեամբ, առևտորով և զանազան արհեստներով:

3. ԱՐՀԵՍՏԱՆՈՅ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Քաղաքի բնակիչները պարապում են արհեստներով, վաճառականութիւնով և զանազան ծառայութիւններով:

Այն մարդիկ, որոնք գիտեն որևէ արհեստ, կոչւում են արհեստալորներ: Պրանց աշխատելու տեղը կոչում է արհեստանոց: Քաղաքներում լինում են զանազան արհեստանոցներ, օրինակ՝ հագուստեղինի, կահկարասիքի, կօշկեղէնի և այլն:

Այն մարդիկ, որոնք պարապում են առևտորով, կոչում են առևտրականներ կամ վաճառականներ:

Իսկ այն մարդիկ, որոնք պարապում են որևէ ծառայութեամբ, կոչում են ծառայողներ, օրինակ՝ աստիճա-

նաւորները, զինւորականները և ուժիշ պաշտօնեաներ, որոնք ծառայում են զանազան հիմնարկութիւններում:

Կան և բազմաթիւ ծառայողներ, որոնք կոչում են բանւորներ: Բանւորների գործ անելու տեղը կոչում գործարան:

Քաղաքներում լինում են շատ գործարաններ, օրինակ կաշի, սապնի, իւղի, բրդի, լուցկու, շաքարի, թղթի, պակու, ճոթի և այլն:

4. ԱՐԴԻՒԽՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԴԻՒԽՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ամեն մի երկիր մեծ կամ փոքր չափով արտադրում է զանազան հում նիւթեր, օրինակ՝ բուրդ, բամբակ, հացահատիկ, մորթի, փայտ և այլն: Երկրի այդ արտադրութիւնը կոչում է արդիւխնաբերութիւն:

Ստացւած հում նիւթերից զանազան արհեստանոցներում ու գործարաններում պատրաստում են այլ և այլ ապրանքներ: Պատրաստի ապրանքների արտադրութիւնը կոչում է արդիւխնագործութիւն: Արդիւխնաբերութեան և արդիւխնագործութեան հետ զարգանում է և երկրի առևտուրը:

5. ՆԵՐՄՈՒԾՈՂ ԵՒ ԱՐՏԱՀԱՆՈՂ ԱՌԵՒԾՈՒՐ

Կան երկիրներ, որոնք չեն ունենում ապրուստի անհրաժեշտ նիւթեր, օրինակ՝ հացահատիկ, նաւթ և այլն: Այդ ենկրները նման նիւթեր ստանում են դրսից: Դրսի երկրներից ստացւած այդպիսի ապրանքի առևտուրը կոչում է ներմուծող առևտուր:

Ընդհակառակը կան երկիրներ էլ, որոնք ունենում են առատ արդիւխնաբերութիւն և իրենց նիւթերը արտահանում են դրսի երկրներ: Դրսի երկիրներ ուղարկուող այդ-

պիսի ապրանքի առևտուրը կոչում է արտահանող առևտուր:

Որքան առատ լինի մի երկրի արդիւխնաբերութիւնը, այնքան հարուստ կը լինի նրա բնակչութիւնը և առևտուրն էլ կը լինի զարգացած:

6. Ի Շ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Իշխանութիւնը լինում է հոգեոր և աշխարհական, եկեղեցական և պետական:

Հոգեւոր իշխանութիւն. — Հոգեոր իշխանութիւնը կառավարում է ժողովրդի հոգեոր գործերը:

Հայոց հոգեոր իշխանութեան պետը կոչում է Կաթոլիկոս Ամենայն Հայոց: Նրա Հայրապետական աթոռը գտնում է ո. Էջմիածնում: Կաթուղիկոսը ո. Էջմիածնի Սինօդի նախագահն է: Նրա իշխանութեանն են ենթարկում թեմական Առաջնորդները: Թեմական առաջնորդն էլ Վիճակային կոնսիստորիայի նախագահն է: Թեմական առաջնորդը իր թեմում ունենում է յաջորդութիւն, որի կառավարիչը կոչում է Յաջորդ: Յաջորդը հոգեոր կառավարութեան նախագահն է:

Սինօդի, կոնսիստորիայի, հոգեոր կառավարութեան իշխանութիւնը համարում է եկեղեցական իշխանութիւն:

Թէ Առաջնորդի և թէ Յաջորդի իշխանութեան տակ կան մի քանի գործակալութիւններ, որոնց պաշտօնեանները հոգեորականներ են:

Իւրաքանչիւր հայ եկեղեցի ունի մի երեցիոխ և 2—4 հոգաբարձու, որոնց ընտրում է ծխական ժողովը: Դրանց է յանձնւած եկեղեցու և նրա դպրոցի անտեսականի հըսկողութիւնը:

Հոգեոր գործերը ունին իրենց օրէնքները:

Պետական իշխանութիւն. — Ամեն մի գիւղ ունի մի կառավարիչ, որ կոչւում է տանուտէրի օգնական (քեօխւա, ոչս): Մի քանի գիւղեր, որ միասին մի գիւղական հասարակութիւն են կազմում, ունեն մի ընդհանուր իշխանաւոր, որ կոչւում է տանուտէր: Կան մեծ գիւղեր որոնք նոյնպէս մի մի տանուտէր ունեն: Վիճակը կառավարում է վիճակային ոստիկանը (որութեան): Գաւառը կառավարում է գաւառապետը, նահանգը՝ նահանգապետը: Մեծ քաղաքները ունենում են քաղաքապետ, քաղաքագլուխ, քաղաքային խորհուրդ՝ դումա, քաղաքային վարչութիւն, ոստիկանութիւն, ոստիկանապետ և ուրիշ իշխանաւորներ:

Մի քանի նահանգների կառավարիչը կոչւում է կառավարչապետ կամ փոխարքայ: Մի պետութեան կատէրութեան գլուխը կոչւում է թագաւոր, կայսր և այլն:

7. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Այն հաստատութիւնները, որոնք մեզ ուսումն կրթութիւն են տալիս, կոչւում են կրթական հաստատութիւններ, օրինակ՝ դպրոց, թատրոն և այլ հիմնարկութիւններ:

Գիւղերում և քաղաքներում կան բազմաթիւ սկզբնական տարրական դպրոցներ: Այդ դպրոցների մի մասը կառավարում է հոգեսոր իշխանութիւնը, միւս մասը՝ պետութիւնը: Առաջին տեսակի դպրոցները կոչւում են ծխական դպրոցներ, երկրորդ տեսակինը՝ պետական:

Բացի տարրական դպրոցներից կան և միջնակարգ ու բարձրագոյն դպրոցներ: Միջնակարգ դպրոցներ են՝ հայութեամական դպրոցները, պետական գիմնազիօնները, բէշլական դպրոցներն և այլն: Բարձրագոյն դպրոցներն են բոլոր համալսարանները:

Կրթական հաստատութիւններ են համարւում նաև թատրոնը, գրադարանը, ընթերցարանը և թանգարանը.

8. Գ Ի Ի Ղ

Գիւղերը լինում են փոքր և մեծ: Իւրաքանչիւր գիւղ ունի իր վարելահողը, արօտատեղին, այգիները, բանջարանոցները և այլն: Գիւղի բնակիչները մեծ մասմբ պարապում են երկրագործութեամբ, հովութեամբ, մասամբ էլ առևտուրով և արհեստով:

Վատառողջ կիմայ ունեցող գիւղերի բնակիչները իրենց անասունների հետ ամառը գնում են եայլաղ, այսպիսի գիւղերը ամառը ամայանում են: Առողջարար կիմայ ունեցող գիւղերը շրջակայ քաղաքների համար ծառայում են որպէս ամարանոց:

Մեծ գիւղերը ունեն իրենց եկեղեցին կամ աղօթատունը, բանկը, դպրոցը, պոստ-հեռագրատունը և ուրիշ հիմնարկութիւններ: Գիւղերը իրենց ապրանքը ծախու են հանում շրջակայ քաղաքներում:

9. Ք Ա Ղ Ա Ք.

Քաղաքները նոյնպէս լինում են մեծ և փոքր: Նրանց բնակիչների մեծ մասը զբաղւում է առևտուրով, արհեստով և ծառայութիւններով: Դրանց համար կան բազմաթիւ խանութներ, արհեստանոցներ և գործարաններ:

Քաղաքի ապրուստը աւելի թանգ է քան գիւղերինը, որովհետեւ գիւղից ներմուծւող ապրանքը մինչև սպառողի ձեռքն անցնելը, անցնում է մի քանի ձեռքով:

Քաղաքներն ունենում են մեծ և հոյակապ շինութիւններ, եկեղեցիններ, թատրոններ, և ուրիշ հիմնարկութիւններ, ինչպէս օրինակ՝ պոստ-հեռագրատներ, զօրանոցներ, դպրոցներ, գրադարաններ և այլն:

Կեանքը քաղաքում եռում է, բնակչութիւնը ամբողջ ժամանակ իրարանցման մէջ է: Ամառները սովորաբար բնակչութեան որոշ մասը գնում է ամարանոց:

10. ՓՈՂՈՅ, ՀՐԱՊԱՐԱԿ, ՇՈՒԿԱՅ.


Գիւղի փողոցները լինում են սովորաբար նեղ, ծուռ ու մուռ, գիշերները մութ, անձրև ժամանակ ցեխոտ և անմաքուր: Քաղաքի փողոցները լինում են սովորաբար լայն ուղիղ, գիշերները լուսաւորւած, սալայատակ և մաքուր ու երթեւկութեան համար՝ յարմար:

Քաղաքներում և գիւղերում կան ընդարձակ տեղեր, որտեղ սովորաբար ծախու են հանում զանազան ապրանքներ, այդպիսի տեղերին ասում են հրապարակ: Փոքր հրապարակները՝ շրջապատւած խանութիւններով, կոչւում են շուկաներ: Հրապարակներում և շուկաներում մեծ առևտուրը սովորաբար կատարում է շաբաթւայ և մանաւանդ տարւայ որոշ օրերին:

Ե. ՆԱԽԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ ԺԱՐՏԵԶԻ.

1. ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԸ.

Այս մեր երրորդ դասարանը ունի չորս պատ. առջեկի պատ, յետկի պատ, աջ պատ և ձախ պատ: Մեր գլխի վերև գտնւում է առաստաղը, ոտների տակ՝ յատակը: Դասարանն ունի լուսամուտներ և դռւու:



Դասարան

Դասարանի պատերից կախւած են քարտէզներ և զանազան պատկերներ: Դասարանում կան նստարաններ, գրատախտակ, սեղան-աթոռ, պահարան և վառարան: Ամեն մի առարկայ դասարանում ունի իր տեղը:

2. ՆԿԱՐ ԿԱՄ ՊԱՏԿԵՐ.

Դասարանի առարկաները կարելի է նկարել: Նկարել նշանակում է առարկայի տեսքն այնպէս գծագրել, որ առարկան պատկերանայ նոյնութեամբ: Այդպիսի պատկեր-

միւս ծայրին ևս մի վերջոկ ուղղահայեաց գիծ են քաշում. ապա ուղղահայեաց զծերի ծայրերը մի ուրիշ հորիզոնական գծով միացնում են. ստացւում է մի քառանկիւնի, որը և կըլինի պահարանի յատակագիծը փոքրացրած չափով:

Այս ձեռով յատակագիծ նկարելիս, առանձնապէս ընդունում է մի պայմանական չափ. օրինակ՝ սաժէնի տեղ վերջոկ, մատնաչափ և ալին. Այդ պայմանական չափը կոչում է զծաչափ կամ մասշտաբ: Նոյն ձեռով գտնում են դասարանի, դպրոցի, տան, բակի և այլ յատակագիծերը:

Յատակագիծերի մօտ միշտ նշանակւում է մասշտաբը իրեն պայմանական թւերով:

6. Ք Ա Ր Տ Է Զ.

Մասշտաբի օգնութեամբ նկարում են աւելի մեծ յատակագիծեր. օրինակ գիւղերի, քաղաքների, գաւառների, նահանգների, վերջապէս ամբողջ երկրագնդի յատակագիծը: Այդպիսի յատակագիծերը կոչում են քարտէզներ:

Որբան մեծ է լինում նկարելու յատակագիծը, այնքան էլ մասշտաբի պայմանական չափը աւելի փոքրանում է, որպէսզի հնարաւոր լինի ամբողջ յատակագիծը տեղաւորել թղթի վրայ:

Քարտէզների վրայ էլ նշանակւում է մասշտաբը իրեն պայմանական թւերով, որով և իմացւում է նկարած երկրի իսկական մեծութիւնը:

Քարտէզների վրայ զանագան գոյներով նշանակում են գետերը, լճերը, ծովերը, լեռները, գիւղերը, քաղաքները և այլն: Քարտէզներ նկարելիս սովորաբար նրա վերեի կողմը ընդունում են հիւսիս, ներքեինը՝ հարաւ, աջ կողմը՝ արևելք, իսկ ձախ կողմը՝ արևմուտք: Քարտէզը նկարում են թղթի վրայ կամ շինում են կաւից:

Նկարեցէք սենեակի, բակի, փողոցի, թաղի յատակագիծը, նկարեցէք ձեր գիւղի, քաղաքի և նրա շրջակայքի քարտէզը:

II ՄԵՐՉԱԻՈՐ ԲՆԱԳԱԻԱՆ

Ը. ԹԻՖԼԻՍԻ ԳԱՒԱՐ

1. ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Թիֆլիսի նահանգն ունի 9 գաւառ. Թիֆլիսի, Գորու, Սղնակի, Թելաւի, Թիսնէթի, Դուշեթի, Բորչալւի, Ախալցխայի, և Ախալքալաքի:

Այս գաւառներից Թիֆլիսի գաւառը Թիֆլիս քաղաքի մերձաւոր բնագաւառն է:

Թիֆլիսի գաւառի բնական սահմաններն են, արևելքից Ղարայեազի դաշտերի շարունակութիւնը, հարաւից Թրիալէթի սարերը, արևմուտքերը, Վրաց-Իմերէթեան սարերը և հիւսիսից, Կովկասեան լեռնաշղթան:

Այս սահմանների մէջ ընկնում է մօտ 4000 քառակուսի վերստ տարածութիւն:

Այդ տարածութեան վրա կան բազմաթիւ գիւղեր, որոնք կազմում են 51 գիւղական հասարակութիւն:

Գաւառի գլխաւոր քաղաքն է Թիֆլիսը: Այստեղ է նստում Թիֆլիսի գաւառի գաւառապետը:

2. ԲՆԱԳԱՒԱՌԻ ՄԱԿԵՐԵՒԻՑԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի գաւառի մակերևոյթը միատեսակ չէ. միջին և արևելեան մասը՝ հարթավայր է, իսկ արևմտեան մասը լեռնոտ է և անտառապատ:

Արևմտեան կողմը ձգւած են Վրացիմերէթեան սարերը, որոնցից սկիզբն են առնում բազմաթիւ առւակներ ու գնում թափւում են կուր գետի մէջ:

Գաւառի հիւսիսից դէպի հարաւ, մինչև Թիֆլիս քաղաքը, ձգւած է մի հովիտ. Այդ հովտի միջով հոսում է կուր գետը:

Թիֆլիսից դէպի հարաւ-արևելք այդ հովտի շարունակութիւնը կազմում են դաշտավայրեր, ինչպէս օրինակ Ղարայեազի ընդարձակ դաշտավայրերը, որոնք այս գաւառի ամենացած տեղերն են:

Կովկասիան Խոճուուրիա



3. ԲՆԱԳԱՒԱՌԻ ԿԼԻՄԱՆ

Թիֆլիսի գաւառի կլիման մակերևոյթի կազմութեան պատճառով նոյնպէս բաժանւում է երկուսի. — ցամաքային և խոնաւ:

Գաւառի արևելեան կողմը ունի ցամաքային կլիմա: Այդ կողմը բաց է Ղարայեազի տաք քամիների առաջ, որ չորացնում են այդ մասի օդը.

Գաւառի արևմտեան կողմը ունի խոնաւ կլիմա: Այդ կողմի անտառապատ լեռներից գաւառն են մտնում խոնաւ քամիներ և օդը խոնաւացնում:

Կովկասիան լեռնաշղթան փակում է հիւսիսային սառը քամիների առաջը, այդ պատճառով, ինչպէս Թիֆլիսի նահանգի, այնպէս էլ Թիֆլիսի գաւառի կլիման ընդհանրապէս տաք է:

4. ԶՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԼԵՌՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ասել մի երկրի ջրագրական պայման, նշանակում է ասել թէ մի երկրի ինչ յարմարութիւններ ունի ջրւելու: Իսկ ասել մի երկրի լեռնագրական պայման, պէտք է հասկանալ թէ երկրի լեռները ինչպէս են դասաւորւած և ինչ յարմարութիւններ են տալիս ջրերի միանալուն:

Թիֆլիսի գաւառի արևմտեան լեռնուած մասը լաւ չէ ջրւում, իսկ արևելեան դաշտավայր մասը գրեթէ անջուրէ: Այդ մասի մի քանի գետերի հովիտները միայն պտղաւէտ են, օր. կուրի հովիտը, որովհետեւ ջրւում են:

Այդ պատճառով էլ Թիֆլիսի գաւառի արևելեան դաշտավայր մասը համարեա թէ զուրկ է բուսականութիւնից: Իսկ արևմտեան մասի ջրագրական պայմանները թէկ անբաւարար են, բայց խոնաւ կլիմայի պատճառով աւելի հարուստ են բուսականութիւնով:

5. ԲՆԱԳԱԿԱՌԻ ԲԵՐՔԸ

Ինչպէս Թիֆլիսի գաւառի մակերևոյթն ունի տարբերակութիւն ունի տարբերակութիւն, այնպէս էլ նրա հողը ունի տարբեր յատրանցից շատերը ապրում են վրացիների հետ նոյն-իսկ կութիւն։ Հողի տարբեր յատկութեան պատճառով գաւառինոյն գիւղում կան նաև թուրքեր, ուուսներ և այլն։ ոի բերքն էլ տարբեր է։

Վրաց-իմերէթեան և Թրիալէթեան սարերը մեծ մաս սամբ անտառապատ են և երկրագործութեան համար ան պէտք. իսկ հարթավայրերը մեծ մասամբ անջուր են ո անբերի։ Այդ պատճառով էլ գաւառի բերքը անբաւարա է։ Գաւառը հարուստ է միայն բամբակի ցանքսերով։ Հո վիտներում հողը մշակւում է, ստացւած բերքը՝ զանազան հացահատիկներ, մրգեր, կանաչեղին և այլն, թէկ քիչ են լինում, բայց լաւ տեսակի։ Այդ բերքը մեծ մասամբ ներ մուծւում է Թիֆլիս։

6. ԲՆԱԳԱԿԱՌԻ ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս տեսանք Թիֆլիսի գաւառից քիչ բերք է ըստացւում, այդ պատճառով էլ գաւառի արդիւնագործութիւնը աննշան տեղ է բռնում։ Թիֆլիս քաղաքում միայն կան զանազան գործարաններ, որոնք թէ գաւառից և թէ գրսից ստացած հում նիւթերից շինում են պատրաստ ապրանքներ, օրինակ՝ բրդից—թաղիք, ճարպից՝ սապոն մորթուց՝ կաշի և այլն։

7. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱԶԳՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՐՈՆԸ

Թիֆլիսի գաւառը եղել է Վրաստանի մի մասը։ Հինգ ժամանակներից սկսած այդ գաւառում ապրել են վրա-

ցիներ։ Այսօր էլ նրա բուն բնակիչները համարւում են վրացիները, իբրև տեղացիներ։

Բացի վրացիներից, գաւառում բնակութիւն են հաս-



Վ. Ր Ա Ց Ա Յ Ե Ր

Գաւառի բնակիչներից վրացիները կրօնով ուուսագաւան են, հայերը լուսաւորչական, թուրքերը մահմեղական։ Սրանք բոլորն ունեն իրենց եկեղեցիներն ու աղօթատները։ Բացի բուն բնակիչներից, եկեղեցները, օր. գերմանացիները, համարւում են գաղթականներ։

8. ԹԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ԳԻՒՂԵՐԸ

Թիֆլիսի գաւառի գլխաւոր քաղաքը Թիֆլիսն է: Գաւառապետը նստում է Թիֆլիսում: Բացի Թիֆլիսից գաւում ուրիշ քաղաք չը կայ: Կան բազմաթիւ մեծ փոքր գիւղեր և ամարանոցներ, որոնցից աշքի են ընում հետևեաները:

Ա. Կ Ո Զ Ո Ր

Կոջորը գտնուում է Թիֆլիսից դէպի արևմուտք. (ու 4940 ոսնաշափ բարձրութիւն) Թիֆլիսից հեռու է $18\frac{3}{4}$ վերսու Սա ամարանոց է, ձմեռը բնակիչներ չեն լինում: Կլիմա առողջարար է մասաւանդ երեխաների համար:

Կոջորը հին ժամանակ եղել է վրաց թագաւորներ ամարանոց: Սրա մօտ մի անտառապատ սարի վրա գտնուում է Քիոռ-օղլու ամրոցը, որ գրաւում է հետաքրքը ւողների բազմութիւն: Կոջորի մօտ գտնուում է նաև Ուժ անունով մի վրացական վանք: Կոջորից ցած գտնուում են Ժամկիս, Օքրողանա, Տաքախմելա գիւղերը, որոնց ջուր պակաս է, զուրկ են բուսականութիւնից:

Բ. Փ Գ Ն Է Թ

Թիֆլիսից դէպի արևմուտք, Դ վերսու վրա, Եշխամբէրուղեանների կալւածքում գտնուում է Ծղնէթ գիւղը Ունի մօտ 270 տուն բնակիչ, որի մեծ մասը վրացախօս հայեր են: Ծղնէթը ունի համեմատաբար զով օդ: Թիֆլիսից շատերը գնում են այդտեղ ամարանոց: Ծղնէթի մօտ է Լիս գիւղը, որ գտնուում է կուր գետի աջ ափին հեռու է Թիֆլիսից 13 վերսու: Լիսի մօտ կայ մի լճակ բնակիչներն են հայեր և վրացիներ:

Գ. Մ Ա Ն Գ Լ Ի Ս

Մանգլիսը գտնուում է Թիֆլիսի արևմտեան կողմը, մօտ 60 վերսուի վրա: (Ունի 3980 ոտն. բարձրութիւն) Բնակիչներն են մեծ մասամբ ուռւմներ և հայեր: Գիւղի շուրջը գտնուում են սոճու անտառներ, դրա պատճառով Մանգլիսը լաւ ամարանոցներից մէկն է համարւում: Սրանից երկու վերսու հեռու, Ալգէթի ձախ ափին, շինւած է Հին-Մանգլիսը. իսկ Մանգլիսից Դ վերսուի վրա Թօնէթ գիւղը: Հին Մանգլիսում կայ մի վանք, որ շինւած է երրորդ դարի վերջերին և շրջապատւած է հաստ պարսպով:

Սա եղել է վրացական նշանաւոր վանք:

Դ. Բ Է Լ Ի Ն Ե Լ Ի Խ Զ

Բելի-կլիւչը գտնուում է Թիֆլիսից դէպի հարաւարեւմուտք, 55 վերսու հեռաւորութեան իրայ: Տեղական լեզուվ կոչւում է Աղբուղաղ: Սա ունի (4110 ոսնաշափ բարձրութիւն) առողջարար օդ և լաւ ջուր: Շուրջը գտնուում են անտառներ: Բնակիչները ուռւմներ են և հայեր: Ամառը այստեղ շատերը ամարանոց են գալիս:

Եօթ վերսուի վրայ գտնուում է մի հին վանք, որ կոչւում է Ջելիօնիյ մօնաստիր. իսկ երեք վերսուի վրայ Տամշուլա հայաբնակ գիւղը, որ հին ժամանակ եղել է վրացոց քաղաք: Սրա մօտ, Խորամ գետի ձախ ափին, մի անառիկ տեղ գտնուում են հին աշտարակների, ամրոցների, վանքերի մնացորդներ: Շամշուլդայի մօտերքը գտնուում են Դաղէթ-խաչէն, Դուրնիս-խաչէն և Բոլնիս-խաչէն հայաբնակ գիւղերը: Բոլնիս-խաչէնն էլ Թիֆլիսից հեռու է 60 վերսու, ունի մի հին վանք, որ յաճախում են ուխտաւորներ: Սա մեր յայտնի գրող Ղազարոս Աղայեանի ծննդավայրն է:

Ե. Մ Ա Ր Տ Ղ Ո Բ

Թիֆլիսից դէպի հիւսիս արևելք, 20 վերստի վրայ, գտնւում է Մարտղոր գիւղը, որ ունի խաղողի բազմաթիւ այգիներ, զբոսավայրեր ու աղբիւրներ։ Մարտղորի մօտ գտնւում է ո. Անտօնի վանքը, որ տեղական լեզով կոչում է Խուլթէք։

Մարտղորից դէպի հիւսիս արևելք, մօտ 40 վերստի վրայ գտնւում է Գոմըռը գիւղը։ (Ունի 3628 սա. բարձրութիւն) Մարտղորից դէպի հարաւ գտնւում է Լիլո գիւղը, որի շրջակայքում կան մի քանի լճակներ, ինչպէս օրինակ Օլգինսկի լճակը։

Զ. Ա Խ Ճ Ա Լ Ա

Թիֆլիսից դէպի հիւսիս, 12 վերստի վրայ, Կուր գետի ձախ ափին, գտնւում է Աւճալա գիւղը։ Սա Թիֆլիսից դէպի Բաթում տանող երկաթուղու առաջին կայրանն է։ Այդ գիւղումն են գտնւում Թիֆլիսին ջուր մատակարարող ջրամբարները։

Աւճալային մօտ է Գլղան գիւղը, որտեղ վրացիների հետ խառը ապրում են և վրացախօս հայեր։ Գլղանն ունի այգիներ, որի խաղողը պահում է ամբողջ տարի։

Է. Մ Ց Խ Է Թ

Մցիւնիթը գտնւում է Արագւա և Կուր գետերի միացման տեղը, Թիֆլիսից հիւսիս, 20 վերստի վրայ։ Սա միացած է Թիֆլիսի հետ երկաթուղով։ Մցիւնիթը մի ժամանակ եղել է վրաց թագաւորների աթոռանիստը։ Սրարևելեան կողմը, մի սարի վրայ, շինւած է Զվարիս սաղղարի վանքը։

Գիւղի մէջ գտնւում է Մցիւնիթի մեծ վանքը, որ հինգամանակ եղել է վրաց կաթողիկոսների աթոռանիստը։ Շինւած է չորրորդ դարում։ Այդտեղ թաղւած են վրաց-

թագաւորներ և կաթողիկոսներ։ Այժմ Մցիւնիթը փոքր գիւղ է, սրա մօտ եղած անտառում շինւած են ամարանոցներ։

Ը. Շ Ր Ձ Ս Կ Ա Վ Ո Ւ Մ

Թիֆլիսից դէպի հարաւ արևելք գտնւում է Ծաղկեվանք ուխտատեղին, դէպի հարաւ գտնւում է Թելէթ գիւղը ո. Գէորգի ուխտատեղիով։ Ծանաքաղի վանքը, որ շինւած է մի բարձր սարի վրա։ Աւելի հարաւ գտնւում շինւած է մի բարձր սարի վրա։ Աւելի հարաւ գտնւում շինւած է մի բարձր սարի վրա։ Կողակիւսի, Բօղբալօ, Կողակ և այլ գիւղեր։ Կողակիւսի մօտ գտնւում է Կողայի լճը։

Թիֆլիսից դէպի հարաւ արևելք, Ղարայեազի դաշտերի մի մասը, ջրւում է Մարիանեան ջրանցքով։ Ղարայեարի մի մասը, ջրւում է Մարիանեան ջրանցքով։ Այդտեղ աճում է զուգութիւնը ամսնում է 5¹⁰։ Այդտեղ աճում է բամբակ, Բնակիչները մեծ մասամբ պարսիկներ են։

Զ. Բ Ն Ա Գ Ա Հ Ա Ռ Ի Ճ Ա Վ Ա Պ Ա Ր Հ Ն Ե Բ Ը

Թիֆլիսի գաւառի բոլոր բնակավայրերը հաղորդակցութիւն ունեն Թիֆլիսի հետ զանազան ճանապարհներով։ Երկաթուղիով, խճուղիներով, սէհարքներով, շաւիղներով։

Երթևեկութիւնը կատարում է ոտքով, ձիով, կառքով, սայլով, երկաթուղիով և այլն։

10. ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Թիֆլիսի գաւառի բնակիչները պարապում են.

Ա. Հողագործութեամբ. — ցանում են բամբակ, հացահատիկ. տնկում են այգիներ, պարտէզներ, մշակում են բանջարանոցներ և այլն։

Բ. Անասնապահութեամբ. — պահում են ոչխար, տաւար, խոզ, ձի։

Գ. Արհեստներով, ծառայութեամբ եւ տնայնագործութեամբ։



Հողագործութիւն

(Յունի բերքը)

Թ. ԹԻՖԼԻՍԻ ՆԱԳԱՆԳԵ

1. ՄԱՀՄԱՆԵՐԸ

Թիֆլիսի նահանգի սահմաններն են. հիւսիսից՝ Կովկասեան լեռնաշղթան, արևելքից՝ Զտքաթաղայի վիճակը և Գանձակի նահանգի մի մասը. հարաւից՝ Գանձակի եւ Երեւանի նահանգներն ու Կարսի շրջանը. Արևելուտքից՝ Վրաց հմերէթեան սարերը:

2. ՄԱԿԵՐԵԽՈՅՑԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԼԻՄԱՆ

Թիֆլիսի նահանգի հիւսիսային, արևելտեան և մասամբ հարաւային կողմերում ձգւած են մի շարք լեռնաշղթաներ, այդ պատճառով էլ նահանգի մակերեսոյթն այդ կողմերում լեռնոտ է: Նահանգի արևելեան կողմի մակերեսոյթը համեմատաբար հարթ է:

Նահանգի կլիման գրեթէ նման է Թիֆլիսի գաւառի կլիմային. Հիւսիսային լեռնոտ մասի կլիման չոր է, արևելտեան և հարաւային լեռնոտ մասերում՝ խոնաւ է, իսկ արևելեան հարթավայրերում՝ տաք է և չոր.

3. ՈՌՈԳՈՒՄԸ, ԲՈՅԱԿ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Թիֆլիսի նահանգը լինելով մեծ մասամբ լեռնոտ և անտառապատ, հարուստ է ջրերով:

Նահանգի երկարութեամբ հոսում է Կուր գետը իր բազմաթիւ մեծ ու փոքր վտակներով: Դրա ձախ կողմի վտակներից նշանաւոր են՝ Լեախվա, Արագա, Իօր և Ալազան: Աջ կողմի վտակներից նշանաւոր են՝ Խրամ և Ալգէթ: Թէ Կուր գետի և թէ իր վտակների հովիտները պտղաւէտ են. Նահանգի արևելտեան կողմը կան մի քանի լճեր:

Նահանգի բուսականութիւնն ու կենդանիները բազմազան են: Հարթավայրերում նոյն-իսկ աճում են բամբակ ու ծխախոտ:

4. ԲԵՐՔՆ ՈՒ ԱՐԴԻՒԽԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Նահանգը իր բնական պայմանների շնորհիւ տալիս է գանագան տեսակ բերքեր։ Նահանգից ստացւում են ցորեն, գարի, սիմինդ, կորեկ, բըխնձ, փայտ, միրգ՝ տանձ, խնձոր, խաղող։ Խաղողի առատութեան պատճառով՝ նահանգի մի քանի գաւառներում բնակչութիւնը պարապում է զինեղործութեամբ։



Յոհան

Հայեր

Արդիւնագործութիւնը Թիֆլիսի նահանգում աննշան տեղ է բռնում։ Աչքի ընկնող գործարաններ կան միայն Թիֆլիս քաղաքում, իբրև նահանգական քաղաք։

5. ԲՆԱԿԻՉՆԵՐ, ԿՐՈՆ ԵՒ ԶԲՈՂՄՈՒՆՔ

Նահանգի բուն բնակիչները վրացիներ են, որ կազմում են բնակչութեան մեծ մասը։ Կան նաև հայեր,

թուրքեր, ոռւսներ, եւրոպական ազգեր, օսեր և ուրիշ լեռնական ցեղեր։

Վրացիներն ու ոռւսները յունադաւան են, հայերը մեծ մասամբ լուսաւորչական, թուրքերը՝ մահմեդական։



Յոհան

Թուրքեր

Վրաց գիւղացիները պարապում են երկրագործութիւնով և այգեգործութիւնով։ Լեռնականները՝ Թուշերը, Պշաւները, Խևուլները և Օսերը պարապում են մեծ մասամբ անսամսապահութիւնով։ Քաղաքներում հայերի գըլխաւոր զբաղմունքն է վաճառականութիւնն ու արհեստը, իսկ գիւղերում՝ երկրագործութիւնը։

6. ՆԱՀԱՆԳԻ ԳԱԼԱՎՈՐԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Բացի Թիֆլիսից, Թիֆլիսի նահանգն ունի հետևեալ գաւառական քաղաքները։

Ա. Գօրու գաւառ.—Գաւառական քաղաքն է Գօրի շինւած է Լեախվա և կուր գետերի միացման տեղերում: Գօրու մօտ, մի սարի մէջ, փորւած է Ուլիլիս-Ցիլիս անունով մի հին քարայր քաղաք: Այս գաւառումն են գտնուում Սուրամը և Բորժումը ամարանոցները:

Բ. Դուշէթի գաւառ.—Գօրու գաւառից դէպի արևելք գտնուում է Դուշէթի գաւառը: Սրա գաւառական քաղաքն է Դուշէթ:

Գ. Թիօնէթի գաւառ.—Դուշէթի գաւառից դէպի արևելք գտնուում է Թիօնէթի գաւառը, որի կենտրոնը համարուում է Թիօնէթը:

Դ. Թելաւի գաւառ.—Թիօնէթի գաւառից դէպի արևելք գտնուում է Թելաւի գաւառը: Սրա գաւառական քաղաքն է Թելաւ:

Ե. Սղնախի գաւառ.—Թելաւի գաւառից դէպի հարաւարևելք գտնուում է Սղնախի գաւառը: Սրա գաւառական քաղաքն է Սղնախ:

Սղնախի և Թելաւի գաւառները կոչուում են Կախէթիա: Կախէթիան յայտնի է զինու արտադրութեամբ:

Զ. Բորչալի գաւառ. — Թիֆլիսի գաւառի հարաւարևմտեան կողմը գտնուում է Բորչալի գաւառը: Սրա կենտրոնն է Շուկալեր աւանը: Այս գաւառումն է գտնըւում Ալլահվերդի պղնձի հանքը: Գաւառի արևմտեան մասը կազմում է Լոռու բարձրաւանդակը: Լոռում յայտնի են Հաղպատի և Սանահնի հայոց հին վանքերը, որտեղ կան Բագրատունեաց թագաւորների և յայտնի հայ իշխանների գերեզմաններ: Գաւառի բուն բնակիչները հայեղն են, որի պատճառով վրացիները այդ գաւառը անւանել են Սօմիէթ (Հայերի երկիր): Լոռումն է գտնուում Դսեղ գիւղը, որը մեր յայտնի բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի ծննդավայրն է:

Է. Ախալքալաքի գաւառ.—Բորչալի գաւառից դէպի արևմուտք գտնուում է Ախալքալաքի գաւառը, որի գաւառական քաղաքն է Ախալքալաք: Սրա մօտ է գտնուում Վարդզիա սարը, որի մէջ փորւած է 5—6 յարկանի մի քարդզիա սարը, որի մէջ փորւած է 5—6 յարկանի մի քարայր քաղաք, իրեն եկեղեցիով:



Ախալքալաք լեռանիվ

Ծ. Ախալցիսայի գաւառ. — Ախալքալաքի գաւառից դէպի արևմուտք գտնուում է Ախալցիսայի գաւառը: Սրա գաւառական քաղաքն է Ախալցիսան: Այս գաւառումն են գտնուում Արասթուման և Ուրաւէլ ամարանոցները: Ախալքալաքի և Ախալցիսայի գաւառները գտնուում են Ծալկայի և Ախալցիսայի բարձրաւանդակների վրայ:

Սև ծովի ափերից մինչև կասպից լճի ափը ձգւում է Կովկասեան մեծ լեռնաշղթան։ Նա ունի 1200 վերստ երկարութիւն և բաժանում է Կովկասը երկու մասի. հիւսիսային Կովկաս և հարաւային Կովկաս կամ Անդրկովկաս։ Այդ լեռնաշղթայի ամենաբարձր սարերն են՝ Ելբուտ ($5\frac{1}{2}$ վ.) և Կազբէկ ($4\frac{1}{2}$ վ.):



Կազբէկ

Ժ. ՀԱՄԱՐՈԾ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1. ՍԱՀՄԱՆԵՐԸ

Այն երկիրը, որ գտնվում է Կասպից, Սև ու Ագովեան ծովերի մէջ տեղը, կոչւում է Կովկաս։ Սա ունի մօտ $8\frac{1}{2}$ հազար քառ. մղոն տարածութիւն։

Կովկասի սահմաններն են հիւսիսից՝ Ռուսաստանը, արևմուտքից՝ Ազովի և Սև ծովերն ու Տաճկաստանի մի մասը. հարաւայից՝ Տաճկաստանն ու Պարսկաստանը, արևելքից՝ Կասպից լիձը։

2. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Կովկասի մակերեւոյթը բազմազան է։ Կէսը լեռնում է, կէսը՝ հարթութիւն։ Լեռնուա մասն ունի նոյն իսկ ձիւնապատ գագաթներ, իսկ հարթութիւնների մէջ պատահում են նոյն իսկ այնպիսինները, որոնք ծովի մակերեւոյթից ցածը են։

Անդրկովկասում գտնվում է մի լեռնաշղթայ, որ կոչւում է Կովկասեան փոքր լեռնաշղթայ։ Այդ լեռնաշղթայի ամենաբարձր սարերն են՝ Մասիս կամ Արարատ (5 վերստ), փոքր Մասիս և Արագած կամ Ալագեազ ($3\frac{1}{2}$ վ.):

Հիւսիսային Կովկասի մեծ մասը հարթութիւնն է։ Անդրկովկասում կան հետեւեալ հարթութիւնները. Ղարայեազի, Մուղանի և Շիրակի հարթաթիւնները։

3. ԳԵՏԵՐ ԵՒ ԼՃԵՐ

Կովկասի գետերի մեծ մասը իրենց սկիզբն առում էն Կովկասեան մեծ լեռնաշղթայից: Նշանաւոր գետերն են Կուր, Արաքս, (Երասխ, Արագ), Թերեք, Կումա. Արանք, բացի Կումայից, թափւում են Կասպից լիճը: Կուման չըհասած Կասպից լճին, կորչում է աւազի մէջ: Կուբան, Ռիօն և Շորոխ, թափւում են Սև և Ազովի ծովերը:



Մասիս

Կովկասի մեծ լիճը Գեղամայ կամ Սևանայ (Գեղազա) լիճն է, որ ունի 70 վ. երկարութիւն, 30 վ. լայնութիւն:

4. ԿԼԻՄԱՆ, ԲՈՅՑԵՐԸ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՔԵՐԸ

Կովկասի կլիման բազմազան է. հիւսիսում բարեխառն է, իսկ հարաւում՝ տաք:

Ինչպէս կլիման, նոյնպէս և բոյսերն ու կենդանիները բազմազան ու բազմատեսակ են:

Կովկասը հարուստ է հանքերով: Ստացւում է նաւթ, աղ, պղինձ, արծաթ, երկաթ, բարածուխ և այլն:

5. ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Կովկասն ունի մօտ 11 միլ. քնակիչ: Նրանք բաժանվում են մօտ 45 ազգերի: Դրանցից 3 միլ. ոռուներ են, $1\frac{1}{2}$ միլ. վրացիներ, $1\frac{1}{2}$ միլ. հայեր, մնացածը՝ պարսիկներ, թուրքեր, քրդեր, լեզգիներ, չեղքեզներ, արխազներ, հրէաներ, յոյներ, գերմանացիներ, ասորիներ և այլն:

6. ԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Կովկասի քնակիչների զբաղմունքն է գլխաւորապէս երկրագործութիւնը, այգեգործութիւնը, անասնապահութիւնը, տնայնագործութիւնը, զինագործութիւնը և այլն: Կովկասում կան կաշւի, թաղիքի, ծխախոտի, սապնի, ձիթի, ապակու և այլ գործարաններ: Կովկասը գրաի երկրների հետ կապւած է ցամաքային և ծովային բազմաթիւ ձանապարհներով:

7. ԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Անդրկովկասն ունի 6 նահանգ, 2 վիճակ, մէկ շրջան: Նահանգներն են՝ Թիֆլիսի, Գանձակի, Բագւի, Երևանի, Քութայիսի և Սև ծովի: Վիճակներն են՝ Կարսի և Դաղըստանի: Շրջանն է՝ Զաքաթալայի:

Հիւսիսին կովկասն ունի 1 նահանգ և 2 վիճակ: Նահանգն է՝ Ստաւրոպոլի: Վիճակներն են՝ Կուբանի և Թերերի:

8. ԿՈՎԿԱՍԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Բացի Թիֆլիսից Կովկասում կան նաև հետևեալ նահանգական քաղաքները:

Ա. Գանձակի նահանգ.—Թիֆլիսի նահանգի արևելեան կողմը գտնւում է Գանձակի նահանգը, որի նահանգական քաղաքն է Գանձակը: Թուրքերը սրան անւանում են Գանջա, իսկ ռուսները՝ Ելիզաւետապոլ: Շինւած է Կուր գետի մէջ թափւող Գանձակ գիտակի վրայ: Քաղաքն ունի մօտ 40,000 բնակիչ, որից մեծ մասը թուրքեր են, մնացածները՝ հայեր և ռուսներ: Քաղաքի հնութիւններից նշանաւոր են՝ պարսիկների Շահ-բասի մզկիթը, հայերի ս. Յովհաննէս եկեղեցին: Նահանգի բնակիչները պարապում են մեծ մասամբ մետաքսագործութեամբ, երկրագործութեամբ, քաղաքի բնակիչները՝ այգեգործութեամբ, գինեգործութեամբ և արհեստներով: Յայտնի են Գանձակի խաղողն ու նուռը:

Բ. Բագուի նահանգ.—Գանձակի նահանգից դէպի արևելք գտնւում է Բագու նահանգը: Սրա նահանգական քաղաքն է Բագու: Սա շինւած է Կասպից ծովի ափին և նաւահանգիստ է: Բարուն յայտնի է նաւթի արգիւնաքերութիւնով: Քաղքի շրջակայքը հարուստ է նաւթի հանքերով: Տարեկան արտադրումը է մօտ 300 միլիոն փութ նաւթ: Բնակիչներից մեծ մասը թուրքեր են, մնացածները՝ հայեր և ռուսներ: Դրանցից մեծ մասն էլ աշխատում են նաւթահանքերում և նաւթային այլեայլ գործարաններում:

Գ. Երեւանի նահանգ.—Գանձակի նահանգի հարաւային կողմը գտնւում է Երևանի նահանգը, որի նահանգական քաղաքն է Երևանը: Սա շինւած է Զանգու գետի վրայ: Նահանգի բնակիչներն են՝ հայեր, թուրքեր, քրդեր և յոյ-

ներ: Երևանը ծաղկած է մանաւանդ պարտիզանութեամբ: Յայտնի են Երևանու մրգերը, մանաւանդ խաղողն ու գուղման: Երևանից մօտ 18 վերստ հեռաւորութեան վրայ գտնւում է Էջմիածինը, որտեղ նստում է հայոց կաթողիկոսը: Այդտեղ է գտնւում Գէորգեան ծեմարանը: Երևանին մօտեն գտնւում՝ Քանաքեռ գիւղը, ուր ծնւել է մեր անդրանակ վիպագիր՝ Խաչատուր Արովեանը. Աշտարակ գիւղը, ուր ծնւել են՝ Ներսիսեան դմբադիր Ներսէս Աշտարակեցին, մեր յայտնի գրողներ Պերճ Պոօշեանն ու Մմբատ Շահազիզը. Օշական գիւղը, որտեղ գտնում է Մմբատ Շահազիզը. Օշական գիւղը, որտեղ գտնում է հայոց տառերը գտնող Մեսրով Մաշտոցի գերեզմանը, վերջապէս՝ Սեւանայ լիճը, որի մէջ եղած կղզու վրա շինւած է Սևանայ հինաւորց վանքը:

Դ. Քութայիսի նահանգը.—Սրա նահանգական քաղաքն է Քութայիս, որ շինւած է Ծինոն գետի վրայ: Բնակիչները մեծ մասամբ վրացիներ են, կան նաև հայեր և ուրիշ ազգեր: Նահանգի բնակչութիւնը պարապում է այգեգործութեամբ, երկրագործութեամբ և ծիսախոտի մշակութեամբ: Այս նահանգի նշանաւոր քաղաքն է Սեւ ծովի ափին Յեղափոխ: Երկաթի խողոշինւած նաև Բաթում՝ նաւահանգիստը: Կանաչ կանաչներով բացուից Բաթում նաւթ են մղում:

Ե. Սեւ ծովի նահանգ.—Սրա նահանգական քաղաքն է Նօվօրոսիյակ, որ միկնոյն ժամանակ նաւահանգիստ է Սեւ ծովի վրայ: Նահանգը հարուստ է խիտ անտառներով, քաղաքը՝ իբրև նաւահանգիստ՝ իր առևտրով:

9. ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ա. Կարսի վիճակ.—Սրա վիճաւոր քաղաքն է Կարս, որ շինւած է Ղարսաչայ գետի վրայ: Սա բերդաքաղաք է. այս քաղաքը ուուսներն առել են տաճիկներից 1877 թւին:

Կարսի վիճակումն է գտնուում Անի աւերակ քաղաքը, որ յայտնի է իր հոռոմիւններով:

Բ. Դաղստանի վիճակ.—Դաղստանի գլխաւոր քաղաքն է Թէմիր-Խան-Շուրա: Ամբողջ վիճակը լեռնոտ է. բնակիչները լէզգիներ են, պարապում են գլխաւորապէս խաշնարածութիւնով: Այս վիճակի քաղաքներից, Կասպից ծովի ափին, նշանաւոր են նաև Դերբենդ և Պետրովսկ քաղաքները:

Գ. Զաքաթալայի շրջան.—Այս շրջանի գլխաւոր քաղաքն է Զաքաթալան, որի բնակիչները մեծ մասամբ լեզգիներ ու թուրքեր են:

10. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Կովկասեան լեռնաշխթայից դէպի հիւսիս գտնուող Կովկասի մասը կոչւում է Հիւսիսային Կովկաս: Սրա աչքի ընկնող քաղաքներից նշանաւոր են.—

Ա. Ստալքապոլի նահանգ, որի գլխաւոր քաղաքն է Ստալքապոլ:

Բ. Կուբանի վիճակ, որի գլխաւոր քաղաքն է՝ Եկատերինողար:

Գ. Թիրեքի շրջան, որի գլխաւոր քաղաքն է՝ Վլադիկավազ, որ շինուած է Թիրեք գետի ափին: Շրջանը յայտնի է իր Պետիկորսկի հանքային ջրով:

Վ Ե Ր Ճ

Ց Ա Ն Կ

Մահագիտելիք.—

1. Մեր տունը	3	2. Արև և նրա տեսանելի շարժումը	19
2. Մեր հայրենիքը	4	3. Լուսին և նրա տեսանելի շարժումը	20
I. ԾՆՆԴԱՎԱՅՐ			
Թիֆլիս	5	4. Աստղեր և նրանց տեսանելի շարժումը	21
1. Հին Թիֆլիսը	6	5. Մթնոլորտային տեղումներ և երեոյթներ	21
2. Նոր Թիֆլիսը	7	Աշխարհագրական հասկացողութիւններ	
Մահական եւ պատկերաւոր տեղեկութիւններ			
1. Թիֆլիսի մակերեսոյթի կազմութիւնը	8	1. Հորիզոն կամ աչքի տեսողութեան սահման	23
2. Զրագրական պայմանները	9	2. Հորիզոնի կամ աշխարհի կողմերը	24
3. Կլիման	10	3. Կողմացոյց կամ կոմպաս	25
4. Գետնի յատկութիւնը	10	4. Մակերեսոյթի կազմութիւնը	26
5. Բուսականութիւնը	11	5. Գետ	27
6. Կենդանիները	12	6. Լիճ և ծով	28
7. Բնակատեղիներ	13	7. Բարեխառնութիւն	29
8. Թիֆլիսի բնակիչները	13	8. Կլիմա	29
9. Պարապմունքեր և արշաւութեաններ	14	Պարապմունքներ, իշխանութիւն եւ ընակավայր	
10. Թիֆ. նշանաւոր հիմնարկութիւնները	16	1. Երկրագործութիւն և հովտութիւն	30
11. Հաղորդակցական ճանապարհներ	18	2. Թափառական և նստակեաց կեանք	31
12. Երկնային մարմիններ եւ մթնոլորտային երեսյթներ	19	3. Արհեստանոց և գործարան 31	
13. Երկինք			

4.	Արդիւնաբերութիւն և ար-	
	դիւնագործութիւն	32
5.	Ներմուծող և արտահանող	
	առևտուր	32
6.	Իշխանութիւն	33
7.	Կրթական հաստատու-	
	թիւններ	34
8.	Գիւղ	35
9.	Քաղաք	35
10.	Փողոց, հրապարակ, շու-	
	կայ	36
	Նախապատրաստական ծա-	
	նօթութիւն քարտէզի	
1.	Մեր դասարանը	37
2.	Նկար կամ պատկեր	37
3.	Յատակագիծ կամ պլան	38
4.	Յատակագիծ նկարելը	39
5.	Գծաչափ կամ մասշտաբ	39
6.	Քարտէզ	40
II.	ՄԵՐՁԱՒՈՐ ԲՆԱԳՅԱՀԱՐ	
	Թիվլիսի գաւառ	
1.	Սահմանները	41
2.	Բնագաւառի մակերևոյթի	
	կազմութիւնը	42
3.	Բնագաւառի կլիման	43
4.	Զբագրական և լեռնագրա-	
	կան պայմանները	43
5.	Բնագաւառի բերքը	44
6.	Բնագաւառի արդիւնագոր-	
	ծութիւնը	44
7.	Բնակիչների ազգութիւնն	
	ու կրօնը	44
8.	Քաղաքներն ու գիւղերը	46
9.	Բնագուտառի ճանապարհ-	
	ները	49
10.	Պարապմունքներ	50
	Թիվլիսի նահանգ	
1.	Սահմանները	51
2.	Մակերևոյթի կազմութիւնն	
	ու կլիման	51
3.	Ոռոգումը, բոյսեր և կեն-	
	դանիներ	51
4.	Բերքն ու արդիւնագործու-	
	թիւնը	52
5.	Բնակիչներ, կրօն և զբաղ-	
	մունք	52
6.	Նահանգի գաւառական քա-	
	ղաքները	53

III. ԿՈՎԿԱԱ

ՀԱՄԱՊՈՄ ՄԵԽՈՒԹԻՒՆ

1.	Սահմանները	56
2.	Մակերևոյթի կազմու-	
	թիւնը	56
3.	Գետերն ու լճերը	58
4.	Կլիման, բոյսերը, կնդա-	
	նիներն ու հանքերը	58
5.	Բնակիչները	59
6.	Արդիւնագործութիւնը	59
7.	Կովկասի վարչական քա-	
	ժանումը	59
8.	Կովկասի նահանգական	
	քաղաքները	60
9.	Կովկասի վիճակային և	
	շրջանային քաղաքները	61
10.	Հիւսիսային կովկաս	62



Ա. ՄԱՅԱԿԱՆԿԱՆ
Ա. ՄԱՅԱԿԱՆԿԱՆ

ՎՐ
ՀՐ

Հ | Арм.
Հ | 3-4471

Թիֆլիսի Մի Խնհմբ Ահասիցիշների ԿԸԶՄԸՆ ԴԸՍԲԳԲՔԵՐԻՑ
ԼՈՅ ԵՆ ՏԵՍԵԼ.

- 1) Մեր դպրոցը, հայոց լեզուի I տարւայ նոր
գասագիրք 25 կ.
- 2) Դասագիրք Հայրենագիտութեան, դ. տարի . 30 կ.

Պահեստը
«Կ. Բ. Բ»
գրավածառոցում

ՇՈՒՏՈՎ ԼՈՅ ԿԲ ՏԵՍՆԵՆ

- 1) «Մեր դպրոց», հայոց լեզուի II տարւայ գասա-
գիրք, ամբողջովին նորութիւն, 2) «Գեղագիր» ուղղա-
գրութեան ձեռագիր պատկերազարդ օրինակներ, երկու
մասով և 3) «Հայրենագիտութեան դասագրքի» դ. տարին՝
աշխարհագրական մասով:

ԳԻՆ է 30 ԿՈՊ.
ԿԱԶՄԱԾ 45 ԿՈՊ.



20581